ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
Shirak Centre of Armenological Studies NAS RA

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ НАУЧНЫЕ ТРУДЫ SCIENTIFIC WORKS

ՀԱՏՈՐ ВЫПУСК EDITION 28 2025 № 1

ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
FOLKLORE STUDIES

ՀՏԴ՝ 398
DOI: 10.52971/18294316-2025.28.1-96

ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ՄՈԳԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆ, ՇՆՈՐՀՔ ԵՎ ՀՆԱՐԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ «ԿԱԽԱՐԴԸ ԵՎ ԻՐ ԵՐԵԽԱՆԵՐԸ» ՀԵՔԻԱԹԱՇԱՐՈՒՄ

Լիլիթ Ա. Սահակյան
ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Ամփոփում
Նախաբան. Հոդվածում քննության են առնված հայ ժողովրդական հրաշապատում հեքիաթներում, մասնավորապես՝ «Կախարդը և իր երեխաները» դիպաշարում կերպարանափոխության դրսևորումները: Ուսումնասիրվել են կերպարանափոխության դերը որպես հմտություն, հնարագիտություն և սոցիալական խնդիրների լուծման միջոց, ինչպես նաև կերպարանափոխության մոգական բնույթը, նրա կապը հայոց առասպելաբանական պատկերացումների և համաշխարհային առասպելաբանության համատեքստում: *Մեթոդներ և նյութեր.* Ուսումնասիրությունն իրականացվել է պատմահամեմատական, տիպաբանական և վերլուծական մեթոդներով՝ հիմնվելով հեքիաթների տպագիր տարբերակների վրա:Ուշադրություն է դարձվել հայ ժողովրդական հրաշապատում հեքիաթներում, ինչպես նաև համահնդեվրոպական առասպելաբանության մեջ կերպարանափոխության թեմայի մշակվածության խնդրին: *Վերլուծություն.* Քննության են առնվել կերպարանափոխության տարաբնույթ դրսևորումները «Կախարդը և իր երեխաները» հեքիաթաշարում, մասնավորապես՝ կերպարանափոխությունն իբրև «հունար», հերոսի ձեռք բերած հմտություն, Օխայ-բաբայի կերպարը՝ որպես մոգության կրող, կերպարանափոխության խորհրդանշական տարրերը, որոնք հանդես են գալիս որպես կապող օղակ երկու աշխարհների միջև: *Արդյունքներ.* Հրաշապատում հեքիաթաշարում կերպարանափոխությունը յուրահատուկ հմտություն է,հմայական ունակություն, որը կապված է անցումային ծեսերի, մոգության, այլ ժողովուրդների դիցաբանական կերպափոխվող կերպարների հետ՝ ձևավորելով շղթայական համակարգ:

Բանալի բառեր՝ *հրաշապատում հեքիաթ, կերպարանափոխություն, Օխայ, մոգություն, հունար, կոմուլյատիվ կերպարանափոխություն, խորհրդանիշներ:*

Ինչպես հղել՝ Սահակյան Լ. *Կերպարանափոխությունն իբրև մոգական հմտություն, շնորհք և հնարիմացություն «Կախարդը և իր երեխաները» հեքիաթաշարում* // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Հ. 1(28): Գյումրի: 2025: 96-105 էջեր:
DOI: 10.52971/18294316-2025.28.1-96

SHAPESHIFTING AS A MAGICAL SKILL, GIFT, AND CUNNING IN THE SERIES OF FAIRY TALES "THE WITCH AND HER CHILDREN"

Lilit A. Sahakyan

Institute of Archaeology and Ethnography of NAS, Yerevan, RA

Abstract

Introduction: This article examines manifestations of shapeshifting in Armenian folk wonder tales, particularly in the plot cycle of "The Witch and her Children". The study explores shapeshifting as a skill, a form of cunning, and a means of resolving social issues, as well as its magical nature and its connection to Armenian mythological beliefs within the broader context of global mythology. *Methods and materials:* The research has been conducted using historical-comparative, typological, and analytical methods, based on printed versions of the fairy tales. Special attention has been given to the degree of elaboration of the theme of shapeshifting in Armenian folk wonder tales, as well as in the broader context of Indo-European mythology. *Analysis:* The paper explores shapeshifting as an acquired skill of the hero, the character of Okhay-baba as a bearer of magic, and the symbolic elements of transformation that serve as a connecting link (mediator) between two worlds. *Results:* In the series of fairy tales, shapeshifting is presented as a unique skill and a magical ability closely tied to transitional rituals, sorcery, and mythological shapeshifters from other cultures, forming a systemic chain of transformations.

Key words: *fairy tale, metamorphosis, Okhai, magic, Greek, cumulative metamorphosis, symbols.*

Citation: Sahakyan L. *Shapeshifting as a Magical Skill, Gift, and Cunning in the Series of Fairy Tales "The Witch and her Children"*// "Scientific Works" SHCAS of NAS RA. V. 1 (28). Gyumri. 2025, 96-105 pp.. DOI: 10.52971/18294316-2025.28.1-96

Ն Ա Խ Ա Բ Ա Ն. Բանավոր ավանդության համատեքստում «կերպարանափոխություն» եզրույթը նշանակում է կերպարանքի, տեսքի փոփոխություն, մի բանից մի այլ բանի վերածվել, վերածում, այլակերպում [1, էջ 725]: «Կերպափոխվել» նշանակում է կերպը՝ կերպարանքը փոխել որոշակի նպատակով և որոշակի ժամանակահատվածում: Բառի հոմանիշների խմբում ընդգրկված են հետևյալ բացատրությունները՝ այլափոխություն, փոխարկություն, փոխակերպում, տարակերպություն, զանազանակերպություն և այլն:

Բառի ռուսերեն համարժեքներն են՝ преображение (փոխակերպում), видоизменение (տեսքի փոփոխություն), метоморфоз (հունարեն μεταμόρφωσις՝ փոխակերպություն, μετα- (մետա-)՝ «փոփոխություն» և μορφή (morphe)՝ «ձև»): Անգլերենում կիրառվում են transformation, transfiguration, metamorphosis բառաձևերը: Կերպի բացատրությունն Աճառյանը տալիս է որպես «տարազ, եղանակ, ձև, որակ, որպիսութիւն, դէմք»: Ըստ Ագաթանգեղոսի՝ «կերպարան» (հատկապես՝ անեզական) նշանակում է «դէմք, արտաքին տեսք»: Kerp բառը պահլավերենում նշանակում է «մարմին, ձև, կերպ», իսկ զենդերենում՝ kəhrp՝ «մարմին, երևոյթ, կերպարան»: Նույն բառից լատիներենում ձևավորվել է corpus («մար-

մին»), իսկ սանսկրիտում՝ «կերպարանք, գեղեցկություն»: Բառաքննության այս վերլուծությունը հանգեցնում է «կաղապար», «գերբ-գերբարանք-կերպարանք» բառաձևումներին [2, էջ 579]:

Կերպարանափոխությունը՝ որպես կերպարանքի կամ մարմնի փոփոխություն, արտահայտում է փոփոխության գործընթացը, երբ կերպը, ձևը կամ դիրքը փոխվում են: Կախված բառի իմաստային դրսևորումներից և կիրառական տարբեր գործառույթներից՝ կերպարանքի հմայական փոփոխություններին և կերպափոխման դրսևորումներին անդրադառնալիս Սարգիս Հարությունյանը և մի շարք այլ բանագետներ կիրառում են «կերպարանափոխություն», «կերպափոխում», «փոխակերպում» և այլ եզրույթներ:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. Հայ ժողովրդական հրաշապատում հեքիաթներում կերպարանափոխությունը սյուժեի կարևոր բաղկացուցիչ է, մոգական հնարք, հմայական գործողությունների համախումբ, բարու և չարի պայքարի գեղարվեստական արտահայտության ձև: Այն ենթադրում է հերոսի կամ առարկայի արտաքին տեսքի փոփոխություն՝ կախարդանքի միջոցով՝ վերածվելով կենդանու, թռչնի, անշունչ առարկայի կամ հակառակը:

Կերպարանափոխությունը հրաշապատում հեքիաթներում դրսևորվում է տարբեր կերպ՝ կախված նպատակից, խնդիրներից, պայմաններից, ժամանակից, տեղից և այլ գործոններից: Այն կարող է տեղի ունենալ պայմանը խախտելու, գաղտնիքը բացահայտելու ժամանակ, դժվարություններ հաղթահարելիս, կամ երբ հերոսը փորձում է մահից փրկվելու հնար գտնել: Այս իրավիճակներում կերպարանափոխությունը հանդես է գալիս որպես փրկության միջոց: Այն ունի ժամանակավոր բնույթ, ինչը ենթադրում է վերադարձ նախկին տեսքին:

Տարբեր տարածաշրջաններից գրառած հրաշապատում հեքիաթների մեծ խմբից (ըստ հեքիաթների տիպերի միջազգային նշացանկի դասակարգման) առանձնացրել ենք «Կախարդը և իր երեխաները» հրաշապատում հեքիաթների դիպաշարը, որտեղ կերպարանափոխման տարբեր դրսևորումներ կան:

Արհեստ, փեշակ սովորելու, սոցիալական կարիքներ հոգալու նպատակով ծնողները (տարբերակներում նաև՝ պառավը) իրենց տղային (կամ աղջկան) տալիս են աղբյուրի ակում (կամ քարերի տակ) ապրող կախարդ ծերուկին, որ՝ «Մին էնպես արհեստ սուվերե, վեր լյուս աշխարք չլին» [14, էջ 22]: «Հեր ու տղա փետները վեր են ունում, ընկնում ճամփա, ընչանք ճաշվա թեքվիլը հասնում են մի ջրի ղրաղ: Էդ ջրի ղրաղին նստում են, խուրջինը բաց անում, բոքոնները դնում աղաքները, ուտում: Տղեն մի քանի դուռում որ դնում ա բերանը՝ ծարավում ա. վեր ա կենում ջրի վրեն մոզի անում, խմում: Էս ջուրը շա՛տ դիր ա գալի տղին, գլուխը բանձրացնում ա, ասում.- Օխա՛յ, էս ի՛նչ լավ ջուր ա [7, էջ 199]: Էս խոսքի վրեն էն սհաթը ջրի միջիցը մի գլուխ ա էրևում»: Ուխայը «շատ մըծ հաքիմ ա, ըշխարքեն տակը, գլոխը գիդացող», որ՝ «…համ ուսում ա սվըրցրիս, համ ալ հեքիմութուն» [15, էջ 56], համ էլ թռչնի, կենդանու, որևէ առարկայի փոխակերպվելու, ասել է թե՝ կերպարանափոխության վարպետությունը: Ծերուկի անունը զարմանք, հիացմունք, անհանգստություն կամ այլ հուզական վիճակներ արտահայտող *օխայ, ուխայ, օֆօֆ* ձայնարկություն-բացականչությունն է, ինչն էլ դարձել է հատուկ անուն հե-

քիաթի (հաճախ հեքիաթի համանուն վերնագիր) չար հերոսի համար՝ *Օխայ, Ուխայ-բաբա, Ուխայ, Ուղխայ, Օխեշ, Օխոշ, Ուխաշ, Օֆօֆ* և այլն։ Հրաշագործ ծերուկը, որն ապրում է ստորգետնյա թագավորությունում կամ ապարանքում, նախապես պայման է դնում ծնողների առաջ. «…Որ իր տված հունարները, արհեստը պիտի նենց գործածի, որ ոչ մեկ չհասկանա, հենց հասկանա, կոչնչացնի» [9, էջ 238]։ Իմաստուն և խորամանկ ծերուկը մեծ հունար ունի՝ տիրապետում է կերպարանափոխության վարպետությանը։ Նա կարողանում է փոխել իր արտաքինը՝ հերոսներին խաբելու, մոլորեցնելու և այլ նպատակներով։ «Անց ա կենում ըսենց մի վախտ, տղեն Օխայ-Բաբու կշտին մնում ա, նրանից թազա բաներ, թազա հունարներ սարվում՝ ղշերի, ջանավարների լիզուն ա սարվում, հենները խոսում, հասկանում. ուզում էր՝ էշ, ձի, ուղտ, ալապաստրակ, մախլաս ինչ ուզենար, դառնում էր, եր չէ, հո էլ եդ ըլնում իսան» [7, էջ 199]։ Հերոսը նրա գրքերը գիշերները կարդում է թաքուն, հմտանում, տարբեր հունարներ ձեռք բերում։ Նրան օգնում են հեքիաթի հերոսուհի օգնականները՝ աղջիկը, խոսող ձին։ «Հորս ադաթն ա,- ասում ա աղջիկը,- ինչ աշկերտ ունենա, որ վադեն թամմեց, պրծավ՝ պտի վերջը նրան ըսպանի. համա ինձ որ անկաջ անես, ինչ ասեմ՝ անես, քու մի մազն էլա չի թեքվի։ Մին՝ ո՛ր ինչ կդառնաս՝ ձի, ուղտ, ալապստրակ, մի խոսքով ինչ որ կըլնես, քեզ կտանեն ծախելու, թամբահ արա գյամդ, յա նոխտեդ հենեդ չտան, թե չէ իմաց կաց՝ եննա ուզենաս իսան դառնա, ինչ անես-չանես, չես կարա, հուր-հավիտենական հենը ընենց կմնաս» [7, էջ 199]։ Աշակերտը կախարդ ծերուկից սովորած հունարների օգնությամբ դուրս է գալիս աղբյուրի ակից լույս աշխարհ ու փախչում նրանից։ Տղան ծնողների մոտ է վերադառնում և կերպափոխվող, առատ սեղանի վերածվող սփռոց է տալիս, որ կուշտ հաց ուտեն՝ խոստովանելով. «Ա՛յ հեր, ուստիս կշտին էնթավուր հունար եմ սարվե, որ ինչ ուզենամ կըլնեմ, եր չէ, հո էլ եդ իսան կըլնեմ, ընդե կկաննեմ» [7, էջ 199]։ Այդպես տարբեր կենդանիների կերպարանք է ընդունում, հայրը շուկայում վաճառում է կենդանի-տղային, իսկ կենդանին նորից մարդ է դառնում, տուն գնում. հերոսը պարբերաբար կերպափոխվում է՝ պահպանելով «վերադարձի» պայմանը։ Կերպարանափոխության վերացման համար կարևոր պայման կա. ոչ մի դեպքում ոչ ոքի չտալ, հատկապես գնորդին չվաճառել սփռոցը, կերպափոխված կենդանու գյամը (սանձը, չվանը, վզկապը), ինչի մեջ թաքնված է կերպարանափոխության գաղտնիքը. այլապես կախարդանքը կվերանա։ Սակայն տղայի ծնողները խախտում են պայմանը, և սկսվում են շարունակական հետապնդումները։ Օխայը շարունակական խոչընդոտներ, դժվարություններ է ստեղծում հերոսի համար՝ ցանկանալով ոչնչացնել նրան։ Վերջինս դժվար փորձությունները հաղթահարում է կերպարանափոխության տարբեր հնարքների օգնությամբ, որպես հմտություն, հնարիմացության մի տեսակ, հունար։ Կախարդ ծերուկը, տարբեր թռչունների ու կենդանիների, առարկաների կերպարանքներ ընդունելով, հետապնդում է տղային։ Աշակերտը նույն ուակության շնորհիվ հնարամտորեն ազատվում է Օխալ-բաբայի հետապնդումներից, և հեքիաթի շարունակությունն այդուհետ կառուցվում է կերպարանափոխության մեկ այլ դրսևորմամբ՝ կոմուլյատիվ (կուտակային) կեպարանափոխությամբ։ Հեքիաթի գլխավոր հերոսն ու Օխայը միմյանց դեմ պայքարում են՝ պարբերաբար փոխելով իրենց կերպարանքը։ Այսպես. տղան դառնում է աղվես, Օխայը՝ թազի, տղան՝ աղունիկ, Օխայը՝ ղրղի

(բազե), տղան՝ խնձոր, Օխայը՝ աշուղ, տղան ցորեն, Օխայը՝ հավ, և այն։ Շղթան ավարտվում է Օխային ոչնչացնելով։ Տղան վերջնականապես դառնում է մարդ, հաղթում չարի ու բարու պայքարում, ու հենց ծերուկը մեռնում է, «գլուխը պոկելու ժամանակ ախպուրը չորացել էր, ցամքել. տեղը դուռ էր բացվել» [9, էջ 119]։ Գործողությունների ընթացքում իրադարձություններն աստիճանական կուտակում են ձևավորում, որտեղ սյուժեի յուրաքանչյուր հաջորդ իրողություն հիմնվում է նախորդի վրա՝ մեծացնելով պատմության լարվածությունը մինչև հանգուցալուծում։Կերպարանափոխության եզրերը երկծայր չեն, ինչպես սովորաբար լինում է։ Եթե հեքիաթներում սովորաբար կերպարանափոխության երկու եզր ունի՝ մարդ-գայլ, աղջիկ-գորտ, տղա-օձ, ապա այս դեպքում ձևավորվում է կերպարանափոխության բազմօղակ շղթա. հերոսները շարունակաբար փոխում են իրենց կերպարանքը՝ որոշակի խնդիրներ լուծելու նպատակով։ Կերպարանափոխության շղթայի օղակներ են դառնում տարբեր կենդանիներ, թռչուններ, առարկաներ՝ ձի, ուղտ [8, էջ 637], ալապստրակ, ղոչ, ոչխար, թազի, աղավնի [10, էջ 52], աշուղ, խնձոր, կորեկ, ցորեն, վարդ, ասեղ, թել, հավ, ճնճուղ [11, էջ 158], ուրուր, արծիվ, կութի, ջուխտըմ արաբ և այլն։ Հերոսը, անցնելով զանազան փորձությունների միջով, հեքիաթի վերջում տիրանում է Օխայի ունեցվածքին, գանձերին։ Հրաշապատում հեքիաթների այս խմբում կուտակային կերպարանափոխությունն օգնում է հերոսին իր նպատակին հասնելու ճանապարհին հնարամտանալու և հաղթահարելու բոլոր խոչընդոտները։

Կերպարանափոխությունն առհասարակ կապված է անցումային ծեսերի հետ, երբ տեղի է ունենում մարդու արտաքին վիճակային փոփոխություն։ Բանահյուսության տեքստերում, որոնք իրենց մեջ արտացոլում են անցումային ծեսերը, կերպափոխման գաղափարը կապված է արխայիկության հետ, պայմանավորված է երկու աշխարհների անցումներով [17, էջեր 24-26]։ Հեքիաթներում «միջնաշխարհը» հանդես է գալիս որպես անցումային տարածք, որտեղ մարդը անցումային ծեսի շնորհիվ ձեռք է բերում այլ կերպարանք և միջանկյալ դիրք գրավելով աշխարհների միջև՝ կապում է դրանք։ Այս միջնաշխարհն առնչվում է ստորերկրյա տարածքներին, որոնք հաճախ հասանելի են ջրի միջոցով։ Անցումը ստորերկրայք սովորաբար տեղի է ունենում ջրի օգնությամբ. «Մի ձեռով նրա կուռն ա բռնում, մեկելը թաթխում ա ջուրը, ընենց թաց-թաց քսում տղի էրեսը,- աչքերդ խփա՛,- ասում ա։ Աչքերը խփելու բաշտան, Օխայ-Բաբին կուռը քաշում ա՝ էրկսով էլ սկվում են ջրի տակը։» [7, էջ 199]։

Հնուց ի վեր ջուրը տարբեր մշակույթներում եղել է պաշտամունքի առարկա, որին զոհեր են մատուցել [6, էջ 159]։ Հայ ժողովրդական հավատալիքներում աղբյուրների ու առհասարակ ջրերի ակունքները համարվել են չարքերի, սատանաների բուն։ Կային աղբյուրներ, որոնցում ապրում էին սատանաներ և չար ոգիներ [23. էջ 338]։ Մարդիկ միշտ սարսափով էին անցնում այսպիսի աղբյուրների կողքով [16, էջ 48]։

Բանահյուսական պատկերացումներում ջուրը ներկայացված է երկու ձևով՝ կենդանի և մեռած։ Մեռած ջուրը անդրաշխարհի ջուրն է [20, էջ 67], որն առնչվում է մահվան և մութ ուժերի հետ։ Ջուրը հանդես է գալիս որպես սահմանագիծ՝ վերին և ստորին աշխարհների միջև, որը խախտելով՝ հերոսն անցնում է մեկ իրականությունից մյուսը։ Հրաշապատում հեքիաթներում այն մաքրագործող ցուցիչ է, կիրառվում է բուժման

ինչպես կենսաֆիզիկական, այնպես էլ ծիսահմայական մակարդակներում [12, էջ 70]: Հեքիաթներում հաճախ հանդիպում են անմահություն պարգևող աղբյուրներ, կաթնաղբյուրներ, լուսաղբյուրներ, որոնք հազար ցավ են բուժում և վերականգնում կյանքը [5, էջ 332]: Սակայն ըստ համահնդեվրոպական հասկացության՝ ստորերկրայքի դռները կամ անցքերը համարվել են ջրառատ վայրերը՝ աղբյուրներ և ճահճուտներ, որոնք կոչվել են ստորերկրյա աստվածության կամ դևի աչքեր [13, էջ 129]: Ջրի մեջ բնակվում էին նաև չարքեր և վիշապներ, որոնք հսկում էին սահմանները տարբեր աշխարհների միջև: Ծովը, ջուրն ըմբռնվում էին իբրև ստորին աշխարհի մաս, գործիք, շեմ, միջնաշխարհ, վերին և ստորին աշխարհների տարանցիկ ուղին ապահովող միջավայր, անդրաշխարհը կապող գործիք [3, էջեր 232-251]: Դրանք համարվել են անդրաշխարհ տանող ուղիներ և խորհրդանշել են կյանքից մահ, իրականությունից հրաշագործություն անցումները:

Բուդդայականության մեջ ջուրը համարվում է դժվարհաղթահարելի արգելք, իսկ մուսուլմանական առասպելաբանության մեջ՝ կյանքի խորհրդանիշ: «Սև ջուր» արտահայտությունը բնորոշ է ստորաշխարհին: Սև ջուրը ավերող ուժ ունի և կապված է մութ աշխարհի խորհրդանշական կերպարի՝ Օխայի հետ: Օխայը հաճախ հանդես է գալիս որպես մութ թագավորության տիրակալ և անմահության ուժի տեր կախարդ արարած, դերվիշ, որն ունի գաղտնի գերբնական ուժեր: Եթե հերոսը չհաղթի Օխային, աշխարհը կարող է կործանվել: Հեքիաթներում ջուրը հաճախ հանդես է գալիս որպես առեղծվածի և անթափանցելիության խորհրդանիշ՝ ավելացնելով մոգության և ստեղծական երևակայության տարրեր: Այն անհրաժեշտ է կերպարանափոխության համար և հանդես է գալիս որպես պայմանական սիմվոլ-գործիք՝ խորհրդանշելով՝

- *Սահմանափակում աշխարհների միջև.* ջուրը ծառայում է որպես սահման՝ բաժանելով տարբեր աշխարհները:
- *Դուռ աշխարհների միջև.* ջուրը կարող է լինել աշխարհի դռան խորհրդանիշ: Նման գործառույթ ունի նաև քարը (այլ տարբերակներում). «Բիրդան քյարմ կպատռի, դուռմ կպացվի, Օֆօֆ էնան էտա լաճ կմտնեն ներս» [10, էջ 52]:
- *Մաքրագործում և վերածնունդ.* ջուրը կապված է մաքրագործման, վերածննդի և կերպարի նորացման հետ՝ խորհրդանշելով նոր սկիզբ կամ հոգևոր վերածնունդ:

Հետևապես՝ ջուրը որպես խորհրդանշական տարր, միաժամանակ կապում է վերին և ստորին աշխարհները, սահմանում կերպափոխվող անցումներ՝ ընդգծելով կյանքի և մահվան, իրականության և մոգության միջև գոյություն ունեցող սահմանները:

Սանձը [23, էջ 338] և *գյամը* խորհրդանշում են բացելը, ինչ-որ բանին հասանելիություն ստանալը կամ այն կառավարելը: Դրանք արտահայտում են կառավարելիություն և վերահսկողություն, իսկ դրանց կորուստը խորհրդանշում է կառավարման կորուստ: Սկանդինավյան դիցաբանության մեջ սանձը կապված է Օդինի հետ, որը վերահսկում էր ճակատագիրը: Այն խորհրդանշում էր իրադարձություններն ուղղորդելու նրա կարողությունը՝ ինչպես հունական դիցաբանության Պեգասի [4, էջ 20] մասին առասպելներում, որտեղ սանձը կարևոր դեր էր խաղում նրան կառավարելու գործում:

Սիրոցը հրաշապատում հեքիաթներում հանդես է գալիս որպես հերոսի կողմից տրվող կախարդական իր: Առասպելաբանության մեջ այն պատկանում է անդրաշխար-

հին [22, էջեր 251-252], որտեղ ուտելիքը լիքն է, և այն տեղափոխվում է անդրաշխարհ մահից հետո: Սփռոցը կերակրում է հերոսներին, այն հաճախ ձեռք են բերում խորամանկությամբ կամ զողությամբ, և այն բացվում-փակվում է հրաման-բանաձևով կամ մտրակի հարվածով [22, էջ 139]:

Հրաշապատում հեքիաթների կենդանիները կապված են նախնադարյան տոտեմական պատկերացումների հետ: Ըստ Պրոպի՝ հերոսը և նրա օգնականը նույն գործառույթն ունեն, նույնական են [22, էջ 140]: Նրանք խոսում են, օգնում խորհրդով և ունեն գերբնական ուժեր: Հեքիաթային հրաշալի օգնականի (այս դեպքում՝ խոսող ձի), պատվերով կամ հրամանով տղան սանդը նետում է, և տեղի է ունենում առարկայական կերպարանափոխություն. սանդը մեշա (անտառ) է դառնում, ապա դանակը՝ սրեր, լեսանը՝ ապառաժներ, փարչի ջուրը՝ ծով: Կերպարանափոխությունների այսօրինակ շղթան այլաբանորեն արտահայտում է համեմատության կամ առնչակցության հիմքով առաջացած փոխակերպումներ:

Սլավոնական առասպելաբանության մեջ գործառութային ընդհանրություններ ունեն և Օխայի կերպարին են զուգահեռվում Վոդյանոյը [23, էջեր 396-400]՝ ստորջրյա թագավորությունում ապրող կերպարանափոխվող հերոսը, որին բնորոշ են բարձր ծիծաղը, ճիչը, հառաչանքը, սուլոցը և այլն (ժամանակային առումով նա ակտիվ է կեսօրին և կեսգիշերին, իսկ գտնվելու վայրերն են՝ քարերի տակ, հին ջրաղացում կամ ակունքի մոտ): Ռուսական բանահյուսության մեջ համանման կերպար է Անմահ Կաշչեյը [19, էջեր 165-175], որը հին սլավոնական առասպելաբանության մեջ համարվում է ստորերկրյա չար տիրակալ՝ Կարաչունի խորհրդանիշ: Նրան հաղթում են խորամանկությամբ, հնարագիտությամբ և խելքի ուժով: Կաշչեյը կարող է տարբեր կերպարանափոխություններով հանդես գալ՝ ծերունուց մինչև իմաստուն կախարդ: Նրա մահը թաքնված է մի քանի կախարդական կենդանու և միմյանց մեջ բնադրված առարկաների մեջ [21]:

Տարբեր ժողովուրդների հեքիաթների սյուժեները հաճախ միահյուսված են ինչպես առանձին մասերում, այնպես էլ ամբողջությամբ: Այս միախառնումով տեղի է ունենում հեքիաթների հիմնական սյուժեների և կերպարների փոխակերպման, փոխլրացման ստեղծագործական գործընթաց, որտեղ առաջանում են նոր մոտիվներ՝ կառուցված կերպարանափոխության տարատեսակ և տարաբնույթ արտահայտչաձևերով:

Կերպափոխման առասպելական պատկերացումները արտացոլվել են նաև ժամանակակից ֆիլմերում, մուլտֆիլմերում և համակարգչային խաղերում: Այդպիսին է օրինակ "Волчонок Флейզին" GTA 5 սերնդի յութուբյան խաղը [18], որտեղ ջրի միջոցով կերպարանափոխվելու հմտություն է տրվում գայլի գլխով մարդուն: Նա անցնում է փորձություններ, հաղթում ստորգետնյա աշխարհի սառցե տիրակալին, սառույցը հալչում է, և աշխարհը վերականգնվում է: Այստեղ ջրի միջոցով արտացոլվում է երկու աշխարհների կապն ու անցումը մեկից մյուսին:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Այսպիսով՝ ելնելով վերոնշյալ նյութից, կարելի է արձանագրել, որ հնդեվրոպական ժողովուրդների առասպելաբանության մեջ տարածված կերպարանափոխության մոտիվը յուրահատուկ ձևով արտացոլվել է հայ ժողովրդական հրաշապատում հեքիաթների՝ «Կախարդը և իր երեխաները» հեքիաթախմբում: Այստեղ

կերպափոխությունը ոչ միայն հմայական կարողություն է, հնարիմացություն, այլև սյուժետային կարևոր տարր, որն ապահովում է գլխավոր հերոսի փրկության և փորձությունների հաղթահարման ընթացքը: Հիշյալ հեքիաթներում կերպափոխությունը դրսևորվում է տարբեր ձևերով՝ շղթայաձև (կոմուլյատիվ) կառուցվածքով, մասնակի կերպափոխումներով, հնարագիտության դրսևորումներով և մոգական միջամտությունների տեսքով: Հատկապես կարևոր են կերպարանափոխության հետ կապված հրաշագործ առարկաները, որոնք հեքիաթում հանդես են գալիս որպես հերոսի գործողություններին օժանդակող միջոցներ, ատրիբուտներ: Կերպափոխման գործընթացը սերտորեն կապված է երկու աշխարհների միջև անցումների հետ, ինչը տեղի է ունենում տարբեր խորհրդանշական ցուցիչների՝ ջրի, քարի, սանձի և այլնի օգնությամբ: Կերպափոխվող հերոսները, առարկաներն օժտված են գերբնական կարողություններով և գործառույթներ են իրականացնում՝ կախված սյուժետային նպատակներից: Հմայական այս համակարգում ջուրը, ակունքը, քարը, սփռոցը և սանձը հանդես են գալիս որպես սյուժետային հենասյուներ, որոնք կապում են իրական և հմայական աշխարհները, ապահովում հերոսի փորձությունների զարգացումը և ծառայում որպես խորհրդանշական տարրեր՝ արտահայտելով «ճանապարհորդությունն ու կերպարանափոխությունը խորհրդանշում են ոչ միայն ֆիզիկական փոփոխություններ, այլև վերափոխում, աշխարհի՝ դեպի ավելի լավը, կատարյալը կերպափոխում: Այսպիսով, կերպարանափոխությունը ներկայացվում է որպես հնարամտության, փորձությունների հաղթահարման և ինքնազարգացման միջոց՝ խորքային իմաստով կապելով անցյալն ու ներկան, ավանդական բանահյուսությունն ու ժամանակակից մշակութային ընկալումները:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Աղայան Է.** «*Արդի հայերենի բացատրական բառարան*», հ. 1: Երևան: «Հայաստան» հրատ.: 1976: 932 էջ:
2. **Աճառեան Հր.** «*Հայերեն արմատական բառարան, հ. 2*»: Երևան: ԵՀ հրատ.: 1926: 688 էջ:
3. **Գալստյան Հ.** «*Մաղի գործառութային ու ծիսական նշանակությունը բանահյուսական տեքստերում*» // Լրաբեր հասարակական գիտությունների, հ. 2: Երևան: ԳԱԱ հրատ.: 2023, 232-251 էջեր:
4. «*Դիցաբանական բառարան*»: Խմբ. Մ. Բոտվինինիկ, Մ. Կոգան, Մ. Ռաբինովիչ, Բ. Սելեցկի: Երևան: «Լույս» հրատ.: 1985: 264 էջ:
5. **Լալայեան Ե.** «*Ազգագրական հանդես, գիրք Զ*»: Թիֆլիս: Տպ. Կ. Մարտիրոսյանցի: 1900: 432 էջ:
6. **Լալայան Ե.** «*Երկեր, հ. 2*»: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1988: 507 էջ:
7. «*Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. II*»: Երևան: ՀՍՍՌ ԳԱ հրատ.: Հատորը պատրաստեց և նախաբանը գրեց Ա. Նազինյանը, խմբ. Կ. Մելիք-Օհանջանյան: 1959: 659 էջ:
8. «*Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VI*»: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: Բնագիրը, նախաբանը, ծանոթագրությունները, բառարանն ու ցանկերը գրեց Ա. Նազինյանը, խմբագիր՝ Ս. Աբրահամյան: 1973: 778 էջ:
9. «*Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. XIII*»: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: Հատորը տպագրության պատրաստեց և ծանոթագրեց՝ Ա., Ս. Ղազիյանը, խմբ.՝ Ս. Գևորգյան: 1985: 616 էջ:
10. «*Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. XV*»: Երևան: «Ամրոց» հրատ.: Հատորը տպագրության պատրաստեց և ծանոթագրեց Վ. Սվազլյանը, խմբ.՝ Ս. Գևորգյան: 1998: 511 էջ:
11. «*Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. XVI*»: Երևան: ԳԱԱ «Գիտություն» հրատ.: Հատորը կազմեցին և տպագրության պատրաստեցին Ա. Նազինյանը և Ա. Ղազիյանը, խմբ.՝ Ա. Ղազիյան: 2009: 600 էջ:

12. **Հայրապետյան Թ.** «*Արքետիպային հարակցումները հայկական հրաշապատում հեքիաթներում և վիպապատմական բանահյուսության մեջ*»: Երևան: ԳԱԱ «Գիտություն» հրատ.: 2016: 462 էջ:
13. **Հարությունյան Ս.** «*Հայ առասպելաբանություն*»: Բեյրութ: «Համազգային» տպ.: 2000: 528 էջ:
14. **Ղազիյան Ա.** «*Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 15*»: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.:1983: 202 էջ:
15. «*Ղարաղաղի հայերը. ազգագրական և բանահյուսական ժառանգություն. հ. II*»: Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.: 2009: 643 էջ:
16. **Մովսիսյան Ս.** «*Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 3*»: Երևան:ՀՍՍՀ ԳԱ հրատ.:1971: 186էջ:
17. **Арнольд ван Геннеп.** "*Обряды перехода"*. Москва. Из-во. "Восточная литературта". 1999, 198 с..
18. *"Волчонок Флейзин"*. https://www.youtube.com/watch?si=AihvdsGCG2CE4GmP&v-=8WeTx9k9gJI&feature=youtu.be-rwusakan (դիտվել է 03. 03. 2025):
19. **Жучкова А., Галай К.** "*Функциональное значение мифологического образа Кощея бессмертного и его отражение в русских волшебных сказках*".// "Вестник славянских культур"/, н. 3 (37). Москва. 2015, 165-175 сс..
20. **Королёв К.** "*Энциклопедия символов, знаков, эмблем*". Москва. Из-во. "Мидгард". 2005. 608 с..
21. "*Мифологический словарь*" https://bibliotekar.ru/mif/57.htm (դիտվել է 03.03. 2025):
22. **Пропп В.** "*Исторические корни волшебной сказки*". Москва. Из-во. "Лабиринт". 2000. 335 с..
23. "*Славянские древности. Под редакцией Н. Толстого, т. 1".* Москва. Из-во. "Международные отношения". 1995. 575 с..

R e f e r e n c e s

1. **Aghayan E.** "Explanatory Dictionary of Modern Armenian" [*Ardi hayereni bacatrakan bar'aran*], V. 1, Yerevan: "Hayastan" Publishing House. 1976. 932 p. (in Armenian)
2. **Acharyan Hr.** "Armenian Radical Dictionary" [*Hayeren armatakan bar'aran*], vol. 2: Yerevan: Yerevan University Press: 1926: 688 p. (in Armenian)
3. **Galstyan H.** "The Functional and Ritual Significance of the Sieve in Folklore Texts" [*Maghi gorc'ar'ut'ayin yev c'isakan nshanakut'yuny' banahyusakan teqsterum*] // Journal of Social Sciences, V. 2: Yerevan. NAS Publishing House. 2023, 232-251 pp. (in Armenian)
4. "Mythological Dictionary" [*Dicabanakan bar'aran*]: Edited by M. Botvinnik, M. Kogan, M. Rabinovich, B. Seletsky. Yerevan. "Luys" Publishing House: 1985. 264 p. (in Armenian)
5. **Lalayan E.** "Ethnographic Journal, book Z [*Azgagrakan handes*]: Tbilisi. K. Martirosyantsi Publishing House. 1900: 432 p. (in Armenian)
6. **Lalayan E.** "Works" [*Yerker*], V. 2: Yerevan. Armenian SSR AS Publ.House: 1988: 507 p. (in Armenian)
7. "Armenian Folk Tales" [*Hay jhoghovrdakan heqiat'ner]*, V.. II: Yerevan. Publishing House of the AS of the Armenian SSR. The volume was prepared and the foreword was written by A. Nazinian, edited by K. Melik-Ohanjanyan. 1959, 656 p. (in Armenian)
8. "Armenian Folk Tales" [*Hay jhoghovrdakan heqiat'ner]*, V. VI: Yerevan. Publishing House of the AS of the Armenian SSR. The original, preface, footnotes, dictionary and lists were written by A. Nazinian, editor: S. Abrahamyan. 1973. 778 p. (in Armenian)
9. "Armenian Folk Tales" [*Hay jhoghovrdakan heqiat'ner]*, V.. XIII: Yerevan: Publishing House of the AS of the Armenian SSR. The volume was prepared for publication and annotated by: A., S. Ghaziyan, ed.: S. Gevorgyan. 1985. 616 p. (in Armenian)
10. "Armenian Folk Tales" [*Hay jhoghovrdakan heqiat'ner]*,V. XV. Yerevan. "Amrots" Publishing House. The volume was prepared for publication and annotated by V. Svazlyan, edited by S. Gevorgyan. 1998. 511 p. (in Armenian)
11. "Armenian Folk Tales" [*Hay jhoghovrdakan heqiat'ner]*, V. XVI. Yerevan. NAS "Science" Publishing House. The volume was compiled and prepared for publication by A. Nazinian and A. Ghaziyan, ed. by A. Ghaziyan. 2009: 600 p. (in Armenian)

12. **Hayrapetyan T**. "Archetypal Connections in Armenian fFiry Tales and Historical Folklore" [*Arqetipayin harakcumnery' haykakan hrashapatum heqiat'nerum yev vipapatmakan banahyusut'yan mej*]. Yerevan: NAS "Science" Publishing House. 2016. 462 p. (in Armenian).
13. **Harutyunyan S.** "Armenian Mythology" [*Hay ar'aspelabanut'yun*]. Beirut: "Hamazkayin" Publishing House: 2000: 528 p. (in Armenian)
14. **Ghaziyan A.** "Armenian Ethnography and Folklore" [*Hay azgagrut'yun yev banahyusut'yun*], V. 15: Yerevan. Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR. 1983. 202 p. (in Armenian)
15. "The Armenians of Gharadagh: Ethnographic and Folklore Heritage" [*Gharadaghi hayery'. azgagrakan yev banahyusakan jhar'angut'yun*] . V. II: Yerevan, "Science" Publishing House of the NAS of the Republic of Armenia. 2009. 643 p. (in Armenian)
16. **Movsisyan S.** "Armenian Ethnography and Folklore" [*Hay azgagrut'yun yev banahyusut'yun*], V. 3. Yerevan. Publishing House of the AS of the Armenian SSR. 1971. 186 p. (in Armenian)
17. **Arnold van Gennep.** "Rites of Passage" [*Obrjady perehoda*]. Moscow. Publishing house. "Eastern Literature". 1999, 198 p. (in Russian)
18. Little Wolf Flayzin [*Volchonok Flejzin*]. https://www.youtube.com/watch?si=AihvdsGCG2CE4GmP&v=8WeTx9k9gJI&feature=youtu.be-rwusakan, (viewed 03.03. 2025). (in Russian)
19. **Zhuchkova A. Galai K.** "Functional Meaning of the Mythological Image of Koschei the Deathless and its Reflection in Russian fairy tales" [*Funkcional'noe znachenie mifologicheskogo obraza Koshheja bessmertnogo i ego otrazhenie v russkih volshebnyh skazkah*]. // Bulletin of Slavic Cultures/, n. 3 (37). Moscow. 2015, 165-175 pp. (in Russian)
20. **Korolev K.** "Encyclopedia of Symbols, Signs, Emblems" [*Jenciklopedija simvolov, znakov, jemblem*]. Moscow. Publishing house. "Midgard". 2005. 608p. (in Russian)
21. "Mythological Dictionary" [*Mifologicheskij slovar'*], https://bibliotekar.ru/mif/57.htm. (viewed 03.03. 2025). (in Russian)
22. **Propp V.** "Historical Roots of the Fairy Tale "[*Istoricheskie korni volshebnoj skazki*]. Moscow. Publishing house. "Labyrinth". 2000. p. 335. (In Russian)
23. "Slavic Antiquities" [Slavjanskie drevnosti]. Edited by N. Tolstoy, Vol. 1. Moscow. Publishing House "International Relations". 1995. 575 p. (in Russian)

Ընդունվել է / Received on: **20. 03. 2025**
Գրախոսվել է / Reviewed on: **09. 04. 2025**
Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **23. 05. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին

Լիլիթ Արայիկի ՍԱՀԱԿՅԱՆ՝ ԳԱԱ հնագիտության և
ազգագրության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, Երևան, ՀՀ,
էլ. հասցե՝ sahakyanlilit1982@gmail.com // orcid.org/0009-0006-7006-4255

Lilit Arayik Sahakyan: junior researcher at Institute
of Archaeology and Ethnography of NAS, Yerevan, RA
e-mail: sahakyanlilit1982@gmail.com // orcid.org/0009-0006-7006-4255